

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՄԵԱՅ

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻԻ 17

15 Դեկտեմբեր 1896



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ.

ՃԻՎԼԷԼԵԿԵԱՆ

Պատը Ալի Ճառտէսի Թիւ 20

1896

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1 Ահնարկ մը Ս. Իգնատիոսի բոլորց վրայ.
- 2 Նոր տոմարին դէմ հին տոմարը գործածողներուն հա-
նած առարկութեանց պատասխան.
- 3 Օղոյ մասնկան պատմութիւնն.
- 4 Աստղաբաշխականք.
- 5 Մանր գիտելիք.
- 6 ՎԱՐՔ Ս. ՄՈՆԻԲԱՅԻ. ՅՈՎՀԱՆՆԷՍ Վ. ԱՔԻԿԵԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

ԵՐԱՅԻՄԻԱՆ ԺԱՐԻ

ԹԻՒ 17

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1896

Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ը

Ս, Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Ի Թ Ղ Թ Ո Ց Վ Ր Ա Յ

(Շարունակութիւն տես թիւ 16)

Յն. «Ներեցէք ինձ, որ ինչ յօգուտ է ինձ զիտեմ ես. այժմ սկսանիմ լինել աշակերտ : Ոչ նախանձ ինչ ել յիս երեւելեաց կամ աներեւութից, այլ զի արժանի եղէց Յիսուսի Քրիստոսի : Հուր եւ խաչ եւ զազանք պատրաստականք, կոտորումն, բաժանումն եւ ցրումն ոսկերաց, հատումն անդամոց, աղացումն ամենայն մարմնոյ եւ չար խռովութիւնք սատանայի եկեացեն ի վերայ իմ, միայն զի Յիսուսի Քրիստոսի արժանաւորեցայց : »

Հն. «Գիտեմ եթէ զինչ հրամայեալն է ինձ, այժմ հաւատամ լինել աշակերտ» . . . յաջորդն ըստ յունին է :

« Ոչ ես ինչ հաճեցայց ընդ հեշտութիւնս աշխարհիս եւ ոչ ընդ քաղաքութիւնս յաւիտենիս այսորիկ. Բարւոք է ինձ մտանել ի Յիսուս Քրիստոս՝ քան թէ տիրել ի վերայ ամենայն ծաղայ երկրի : Զի զի՛նչ շահ մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեցի եւ զանձն իւր տուծեցի : Զոր խաչեցաւն վասն իմ ինչորեմ. զոր յարեաւն վասն մեր ի մեռելոց կամիմ. եւ ծնունդ նոր սպասե ինձ : » Առաջին տողքն մինչեւ ի Բարւոք այսպէս կը թարգմանէ Տպագիրն . Ոչ ինչ օգնեցեն ինձ զանձն աշխարհի եւ ոչ քաղաքութիւնս սորա : Տիրել ըստ յունական օրինակին

բազաւորելն է : Աւետարանին ծանօթ խօսքն կը պակսի ի Տը-
պագրին : Չոր խաչեցաւն վասն իմ խնդրեմ . յոյնն կ'ըսէ . զոր
մեռաւն վասն մեր խնդրեմ . իսկ յաջորդ իմաստին մէջի վասն
մերն ի յունէն յաւելաւ : Եւ ծնունդ նոր սպասե ինձ , յոյնն
կ'ըսէ . Ο de toketós moi epikeitai . զուցէ Նորածինն սպասե
ինձ . Տպագիրն կ'ըսէ . Երկունք մահու յառնեն ի վերայ իմ :

Յն . «Ներեցէք ինձ եղբարք , (Տպ . Մանեքուք զիս յանձնե
իմմե , եղբարք) , մի՛ մերժէք զիս ի կենաց . մի՛ կամիջիք զմահ
իմ : ԶԱստուծոյ կամեցողն լինել՝ մի՛ շնորհեք աշխարհի . քոյլ
տուք ինձ գանարատ լոյսն ընդունել : Հասեալ անգոր՝ մարդ Աս-
տուծոյ լինիմ , անսացէք ինձ լինել նմանող չարչարանաց Աս-
տուծոյ իմոյ . իսկ որ ունիցի գնա անձին՝ ի միտ առցէ զոր ես
կամիմ , եւ չարչարակից լիցի ինձ՝ զեռելով եթէ զինչ է որ
պաշարեալն է զիս : » Տպագիրն կ'այլայլէ ի սպառ իմաստն ու
խօսք :

Հյ . Մի՛ կամիցիք գնան իմ , զոր ոչ կամիմ մնալ յաշ-
խարհի . մի՛ պատուեք այդպէս , եւ մի՛ նախանձաւոր առնեք
երեսելեացս , քոյլ տուք ինձ ընդունել գանապառ , լոյսն , ի վեր
յորժամ եթէ մարդ լինիմ կատարեալ . անսացէք ինձ լինել
նմանող չարչարանաց Աստուծոյ իմոյ : Իսկ որ նայեսցի՝ ի միտ
առցէ զոր ինչ ես կամիմ , եւ չարչարեսցի ընդ իս . » Եւն . յա-
ջորդն նոյն է : Զարչարեսցի բառն ըստ յունին է , Sympatheitō .
որ բուն իմաստին է չարչարակցիլ , եւ ըստ կազմութեանն ,
կամ այս միտք թարգմանչին հոճոյ երեւցած է , կամ թէ գա-
ղափարողաց ձեռքէն վրիպած է կիցն . այս բառին ճիշդ համա-
կազմն եւ համիմաստն է փրանկական Compassion :

« Իշխան աշխարհիս յափշտակել կամի զիս , եւ զոր յԱստ-
ուած զմիտս իմ ապականել . (Տպ . կ'ըսէ . եւ զխորհուրդս մտաց
իմոց սպանանել) . մի՛ ոք ի ձէնջ՝ յանդիման կացելոց (չիք ի
Տպ .) օգնեսցէ նմա , այլ մանաւանդ յիմ կողմն լերուք , այսինքն՝
յԱստուծոյ : Մի՛ լիցի ձեզ խօսել եւ եք գծիսուս Քրիստոս՝ եւ
աշխարհի ցանկալ : Նախանձ առ ձեզ մի՛ բնակեսցէ . եւ մի՛ ե-
թէ յորժամ գայցեմ առ ձեզ եւ խնդրիցեմ ի ձէնջ ինչ անսայ-
ցէք ինձ . այլ որոց զրեցիդ առ ձեզ՝ հաւատացէք : Զայս կեն-
դանութեամբ գրեմ առ ձեզ , բայց մեռանել սիրեմ : Սերն իմ
խաչեալ ե , եւ չիք առ իս հուք նիւթասեր . այլ հո՛ւ կենդանի՝
որ խօսի յիս եւ ասե ցիս ի ներքուստ . Եկ առ . հայր : Ոչ ցան-
կամ ապականութեան կերակրոյն , եւ ոչ ցանկութեանց այսց

կենաց. զհաց Աստուծոյ խնդրեմ, հաց երկնաւոր, հաց կենաց, որ է մարմին Յիսուսի Քրիստոսի, որդւոյ Աստուծոյ, եղբւոյն ի վերջին աւուրս ի զաւակէ Դաւթի. եւ զըմպելի Աստուծոյ կամիմ, որ ե սեբ անեղծ եւ կեանք յախտենականք:» Խօսել զՅիսուս Քրիստոս յունական ոճիւ հայցական զրուած է. այսինքն է անուանել, կարդալ, խօսել զՅիսուսէ. իսկ հետեւեալն՝ եւ աշխարհի ցանկալ (մի՛ լինիցի ձեզ) անորիչ հրամայականն ըստ յունին, Տպագիրն հաստատական ձեւով կը կարդայ. եւ աշխարհի մի՛ ցանկալք: Իսկ յաջորդ տողերուն մէջ մանր մանկանց ձեռքով վնասուած է բնագրին խօսքն. ինչպէս այլն՝ արդ կարդալով, հաւատացեքն հրամայարար՝ ի ստորագասականն փոխելով, հաւատայցեք: Սերն իմ խաչեալ ե կ'ըսէ յոյնն, եւ ջիբ առ իս հուր նիւթասեր, (philóylon). որ է հիւլեասեր: Տպագիրն այլապէս կը գրէ այս իմաստն. Սերն իմ խաչն ե. իմ տուփումն խաչեցաւ, եւ ջիբ առ իս այլ ջերմութիւն սիրոյ: Արդեօք ինքնիրմէ՞ ծնած է այս կրկնութիւն. եւ կը յառաջէ. Զոր բարի եւ կենդանի գոյ լիս, որ ի ծածուկ ասեցիս՝ թէ եկ առ Հայր. ըսելով չկայ թէ այս հայերէն քան զյունարէնն յոյժ դողարեկ է: Իսկ հետեւորդն մեծ տագնաւ կրած կ'երեւի. Ոչ ցանկալ ծերութիւն կարին, եւ ոչ ցանկութեանց աշխարհիս այսմիկ. թէ պէտ եւ իմաստէ զուրկ չէ. ձեռագրաց քննութեան կարօտի: Հաց երկնաւոր, հաց կենաց, որդւոյ Աստուծոյ, եւ ի վերջին աւուրս, կը պակսին ի Տպագրին:

Եւ վասն զի Սրբոյ Հային սքանչելի բացատրութիւնքն մոռցաւ Տպագիրս, Սրբոյ Ըմպելւոյն վրայ կը յաւելու պարզ խոստովանութիւնն. եւ զըմպելի արեան նորա հայցեմ՝ որ ե սեբ անեղծ եւ անապական. նուրբ բառովն՝ հայցեմ:

« Ոչ եւս կամիմ ըստ մարդկան կեալ, եւ այդ եղիցի ինձ եթէ զուր կամեցիք. կամեցարուք ուրեմն ապա զի եւ ձեզ կամեսցի. » վերջին տողերս կը պակասին ի Տպագրէն. յոյնն բառականաւն կ'ըսէ. ապա ուրեմն կամեցարուք՝ զի եւ դուք կամեցեալ լիջիք, այսինքն՝ արարէք ինձ զայդ եթէ նմին եւ զուր ցանկալք հասանել: « Ի ձեռն սակաւ նշանագրացս խնդրեմ ի ձէնջ՝ հաւատացէք ինձ »: Տպագիրն ի սկզբան կը յաւելու. Զոր ի ձեռն. մինչդեռ յունականին մէջ վերջին խօսքն կը պահանջէ զայդ բառ, եւ կամ զի ստորագասականն. զի հաւատասցիք կամ զի հաւատայցեք ինձ: « Յիսուս Քրիստոս նոյն ինքն յայանեսցէ ձեզ եթէ ճշմարտապէս ասեմ, անսուտ բերանն յոր խօսեցաւ

Հայր ճշմարիտ » Վերջին խօսքն տծական չէ Հօր , այլ մակ-
բայ, ճշմարտապէս. այս գործածութիւնը բանից՝ Թարգմանչին
ճարտարութիւնն կը յայանեն :

« Հայցեցէք վասն իմ զի ժամանեցից . » Տպագիրն կ'ըսէ .
զի արժանի եղեց հոգեով սրբով . եթէ արժանի եղեցն ծանօթ
է մեզ նախկին գործածութեանց մէջէն՝ հոգեով սրբովն յաւել-
ուած կը թուի, բնագիրն չունի զայդ : « Ոչ քստ (Տպ. ի մարմնի)
մարմնոյ գրեցի ձեզ՝ այլ քստ մտաց Աստուծոյ » Տպագիրն ու-
նի, այլ հոգեով եւ կամօքն Աստուծոյ : Այս եւ նախորդ խօսք՝
Ս. Իգնատիոսի գրչէն եթէ ոչ իբր պատգամ՝ գէթ իբր աստ-
ուածայայտութիւնը նկատուած են : Գեղեցկի օրինակ մ'է հե-
տեւեալն . « Թէ չարչարեցայց՝ դուք կամեցայք, եթէ խոտիցիմ՝
դուք ատեցիք զիս » Տպագիրն կ'ըսէ . Թե չարչարեցայց՝ դուք
կամեցարուք . իմաստն է քստ յունականին՝ եթէ արժանանամ
վասն Տեառն չարչարելոյ՝ յայտ է թէ դուք կամեցողք կամ կա-
մարարք պիտի երեւիք . եւ երե խոտորիցիմ (յայտնի է վրի-
պակն, խոտեցիմ պիտի ըլլայ) , յայտ է քե դուք ատիցեք զիս.
այս վերջնովս Տպագիրն ուղղապէս կը պարզէ իմաստն յայտ է
քե խօսքով :

« Յիշեցէք յաղօթս ձեր զեկեղեցին Ասորոյ՝ որ փոխանակ
իմ՝ Աստուծով հովուի . միայն Յիսուս Քրիստոս այց առնէ նմա
եւ սէրդ ձեր » Կաջ արդեօք այնչափ խաւարեալ տեսութիւն
մը՝ որ սոյն տողերուն զեղեցիկն եւ վսեմն, զգայուն ու թըր-
թունն չնկատէ . քան զայս աւելի հմայական խօսք եւ զարձ-
ուածք կարծեմ չկայ . Հովիւն իւր հօտէն յափշտակուած՝ փրդ-
կած սրտով կը խորհի զիւրն, եւ զի չէ ձեռնհաս յինչ՝ Աստու-
ծոյ՝ վերնոյն անբռնարարելի տեսչութեանն կը յանձնէ զայն .
որ փոխանակ իմ Աստուծով հովուի . Յաջորդ այց առնէ բա-
ռին յունականն է episkopeite . Տպագիրն աւելի զեղեցիկ կ'ը-
սէ . միայն Յիսուս Քրիստոս այց արացէ նմա եւ սէրդ ձեր :

« Այլ ես ամաչեմ կոչել զիս մի ոք ի նոցանէ . զի չեմ ար-
ժանի, քանզի վերջինն եմ ի նոսա եւ վիժած . այլ ողորմութիւն
գտի լինել ինձ՝ եթէ արժանաւորեցայց Աստուծոյ » Տպագիրն
կ'ըսէ . քանզի վերջինն եմ առաքելոց նոցա . բայց յուսամ ո-
ղորմութիւն գտանել՝ երե . . . : Վիժածն բառականն է յունա-
կանին . իմաստն է քստ Առաքելոյն տրուպն եմ :

« Ողջոյն տայ ձեզ հոգի իմ եւ սեր եկեղեցեաց որք ըն-
կալան զիս յանուն Յիսուսի Քրիստոսի եւ ոչ որպէս զճանա-

պարհորդ : Նա եւ որք ոչ էին մերձ ինձ յանցս ճանապարհին
ըստ մարմնոյ՝ ըստ քաղաքի քաղաքի ընկերացան ինձ :» Տպա-
գիրն նախկին ասողերէն սկսեալ աղապէս կը խօսի . փոխանակ
սեբ եկեղեցեաց խօսքին՝ ունի՝ եկեղեցիք ամենայն, որք ընկա-
լան զիս իբրեւ զպատկեր Յիսուսի Քրիստոսի եւ ոչ որպէս
գնանապարհորդ . յայտնի է որ Տպագրին խօսքն շատ աւելի
պատշաճաւոր է պատկեր բառիւ՝ քան յունականին անունն .
բնագրին է կարծեմ աստ փոփոխութիւնն : Նա եւ որք ոչ էին
մերձ յանցս ճանապարհի՝ ըստ քաղաքի քաղաքի յառաջեալ
ընդունեին զիս : Յունականին ըստ մարմնոյ բացատրութիւնն
վրիպակաւ կը պակսի ի Տպագրէն . յանցս ճանապարհին՝ կրկին
զոյսկանք չեն, յատկացեալի իմաստիւ, այլ յանցս համազօր է
յանցանելոյ՝ ընդ անցանելոյ (զճանապարհ) , բայանունն արմատ ,
զոր կ'երևի թէ Ջեռազրաց կամ Տպագրին գաղափարողք յատ-
կացեալ կարծելով՝ ըստ մարմնոյ խօսքն յապաւեր են :

«Գրեմ ձեզ զայս ի Ջմիւռնիոյ, (Տպ. գրեցի) , ի ձեռն եւ-
րանելեաց Եփեսացոց : Է ընդ իս ընդ այլ բազումս կրօնու ,
ցանկալի ինձ անուն : Որոց եկին ընդ առաջ իմ յԱստուրոյ ի
Հռոմ ի փառս Աստուծոյ՝ հաւատամ երե գիտեք . որոց ցուցեք
զիս առ յդրան լինել, զի ամենեքին արժանիք են Աստուծոյ եւ
ձեզ. զորս պատշաճ է ձեզ ըստ ամենայնի հանգուցանել : Այս
քանի մը տողերուն բաղդատութիւնն ընդ Տպագրին բաւական
է պայծառ գաղափար տալու մեծ փոփոխութեանն զոր կրած
է այս կամ այն պատճառներէ հայերէնն : Տպագրին երկրորդ
տունն կ'ըսկի . Են ընդ իս եւ այլ բազում եղբարք սիրե-
ցեալք եւ որք եկին ընդ առաջ իմ յԱստուրոյ ի Հռոմ ի փա-
ռոքս Աստուծոյ : Եւ դուք ըստ արժանեաց հանգուցեք զամենայն
մարդ : Քաղաւած մ'է Տպագրին ըսածն :

«Գրեցի ձեզ զայս յառաջ քան զինն կողանդից սեպտեմ-
բերիս այսինքն անգոստոսի քսան եւ երեք, Ողջ լեւուք մինչեւ
ի կատարումն՝ համբերութեամբ Յիսուսի Քրիստոսի . ամէն : »
Տպագրին առեղծուած մ'ունի վերին բացատրութեան մէջ .
Գրեցի ձեզ յառաջ քան զինն կաղանդից սեպտեմբերի . յամ-
սեանս ի — որ օր էք եր . անն աւգոստոսն է , կէսէն աւելին
կրծուած : Իսկ յանգն միշտ իր այլալուծիւնն եւ յաւելուածն
ունի . Ողջ լեւուք եւ հաստատուն կացեք համբերութեամբ Յիսուսի
Քրիստոսի : Շնորհք Տեառն մերոյ ընդ ձեզ ամենեւին . ամէն :

(Շարայարելի)

ՆՈՐ ՏՈՄԱՐԻՆ ԴԷՄ ՀԻՆ ՏՈՄԱՐԸ ԳՈՐԾԱԾՈՂՆԵՐՈՒՆ
ՀԱՆԱԾ ԱՌԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆ

(Շարունակութիւն տես քիւ 16)

13. Քրիստոնէից նախկին շրջանին քայլ առ քայլ ետ մը-
նայն. — Դ զարուն քրիստոնէից ընդունած եւ գործածած լուսն-
արեւային շրջանն կամ իննեւտասներեկի ոսկեգիրն՝ որուն դեռ
կը հետեւին յոյն եւ ռուս եկեղեցիք՝ այն զարուն ճիշտ լուսնի
միջին ընթացքին համապատասխան էր. այլ վասն զի ասոնց
ընդունած ընթացքն քանի մը բոսէ աւելի երկայն էր բնակա-
նէն՝ 308 յուլիան տարեաց շրջանին օր մը ետ կը մնային. որով
այսօր այդ ընթացքին հետեւողներն հինգ օր յետադիմած են
ուղիղ միջին շրջանէն:

2 զարուն քրիստոնէից լուսնարեւային շրջանը միջին ըն-
թացքէն 15 ժամու չափ ետ մնացած էր: Դիոնիսիոս Փոքրն եւ
ուրիշ քրիստոնեայ հաշուադէտք այդ շրջանին անստղիւտ ըլլա-
լուն համոզուած՝ կարծեցին թէ Հարք կամաւ այդ յետամնա-
ցութիւնն ուղած էին, եւ փոխանակ օրէ օր այդ երթալով ա-
ւելնալիք վրիպակն դարմանելու՝ ընդհակառակն մեծ պատճառ
նկատեցին զայդ եւ մեկնաբանեցին՝ թէ Ս. Հարք այդ դիտամբ
քրիստոնէական Զատիկն եւ հրէից Պասեքն զուգարկալիէ բո-
լորովն կ'ազատէին: Այլ այս ինչպէս ըսինք՝ այսպէս չէ. եւ
այդպէս իսկ համարելով ինչ անպատեհութիւնն այսօր՝ եթէ մեզ
հետ իրենց Պասեքն տօնեն հրեայք: Քրիստոնէութեան առաջին
զարուց հրէական ազդեցութիւնն ուր է այժմ. թող որ առաս-
պելական խնդիր մ'է այդ. իսկ չորեքսասանեայք այլ եւս գո-
յութիւն չունին:

14. Գրիգորեան վերադիրներու յետամնացութիւնն. — Գրի-
գորեան կամ նոր առմարի նորոգութեան զարուն լուսնական նոր
վերադիրները քննելու պաշտօն ունեցող չափադէտք նոյն կարծ-
եաց հետեւելով՝ Դ զարու վերջին մասին շրջանին ունեցած նոյն
յետամնացութիւնը կարեւոր կարծեցին պահել նոր վերադիրնե-
րուն վրայ: Այսօր աստեղաբաշխք Գրիգորեան առմարին այս յե-
տամնաց զնացքն կը պախարակեն, հակառակ բոլորովն յուլիան
առմարին հետեւողներուն քննադատութեանց: Լաւ նայելով՝ նոր
առմարին վերադիրներուն այս յետամնացութիւնն մեծ սխալ մը

է. վասն զի եթէ սկզբնական միջօրէականն հին աշխարհի առեւելեան կողմը գնենք, Պեհրինկի նեղուցին վրայ, ինչպէս զօրաւոր կարծիքն է, եւ օրն ալ երեկոյեան ժամը Յէն (ըստ եւր.) եթէ սկսինք՝ ըստ լուսնարեւային տոմարաւ փարոյններու, այն ատեն Գրիգորեան վերնադիրներն լուսնի միջին ընթացքին այնպէս կը մօտենան՝ որ էական վրիպակի մը վնասէն կը պրծին:

15. Այժմեան հրէից լուսնարեւային շրջանն. — Հրէից լուսնարեւային շրջանն՝ ըստ որում 360 ին Հիլլէլ հաստատեց, լուսնային ամիսներու սկիզբն եւ վերջն ամիսնայն ճշգրտեամբ չափած ըլլալով՝ լուսնի միջին ընթացքին հետ գրեթէ նոյն համաձայնութիւնը պահեց: Սակայն հրէական Պատեքին ըսկզբնական սահմանն արեւային տարւոյն համամատուցեամբ փոխուած է. ասոր պատճառն հասկնալ դիւրին է:

Եւրպայական շրջանին տարին քանի մը վայրկեան աւելի երկար ըլլալով բնականէն՝ այսինքն միջին հաշուով 365 օր 5 ժամ 55 վայրկեան, կը հետեւի որ 360 թուականէն մինչեւ այսօր սկզբնական սահմանն գրեթէ ութ օր արեւային ճշգրիտ տարւոյն մէջ ետ մնացած է:

(Այժմեան հրէից տարին 218 տարւոյ մէջ արեւականային տարիէն օր մը կը յետադիմէ): Այս ընթացքով 360 մարտ 18 ին եղող սկզբնական սահմանն՝ այսինքն գարնային գիշերահաւասարէն երեք օր առաջ, այսօր հինգ օր գիշերահաւասարէն ետ կը մնայ, Գրիգորեան տոմարին մարտի 26 ին համապատասխանելով:

Այս վերջին կէտին վրայ նոյն իսկ ներկայ հրէից տոմարը աւանդական օրինաց հետ համաձայն չէ. ըստ որում Ս. Գիրք կը հրամայեն Պատեքն գարնան առաջին ամսեան վրայ չափելով կատարել:

16. Նոր տոմարին Ջատիկներուն հրէից Պատեքին հետ զուգադիպութիւնն. — Տեսանք՝ թէ 360 էն մինչեւ 500 քրիստոնէական թուականն՝ 140 տարեաց շրջանին մէջ՝ որոնք էին զուգադիպութեան թուականքն, դէթ 13 անգամ. իսկ հիմակ ականենք՝ թէ նոր տոմարին սկսելէն (1582) մինչեւ 2100 որոնք պիտի ըլլան այդ տարիներն:

Անցեալ	1609	Թուին	19	ապրիլ	Կիւրակէ,	15	Նիսան
»	1805	»	14	»	»	»	»
»	1825	»	3	»	»	»	»
Գալիք	1903	»	12	»	»	»	»

Գալիք	1923 թուին	1 ապրիլ, Կիւրակէ,	15 Նիսան
»	1927 »	17 »	»
»	1934 »	18 »	»
»	1981 »	19 »	»

Եւ այս 519 տարուան շրջանին մէջ, իսկ յաջորդելիք 125 տարիներու մէջ մինչեւ 2106 ապրիլ 18 հրէականին հետ ընաւ զուգադիպելիք չունի : Ըսել է՝ 10 զուգադիպութիւն միայն 1582 էն մինչեւ 2100 :

Համեմատելով հիմակ Նիկիոյ ժողովոյն ժամանակն եւ մերը՝ յայտնի է որ Նիկիոյ ժամանակակից Հարք եւ յաջորդ երկու դարերուն աւելի քան այժմեան Կաթողիկէայք այդ յաւնական ենթադրեալ զատափետութեանց ու հակառակութեանց արժանաւոր են :

17. Հրեական Պասեքէն կանխող քրիստոնէայ Զատիկներ. — Գրիգորեան կանխող Զատիկներ. — Երբ հրեայք կաթողիկէայց Զատիկ կատարած ամսոյն մէջ Պասեք ատենն՝ նոր տոմարինն քան զհրէականն չկրնար կանխել : Այլ երբ հրէական շրջաններու շարժմամբ նիսան ամիսն եւ հետեւանօք Պասեքն գիշերահաւասարին յաջորդող երկրորդ յուսնին ձգուի՝ ինչպէս երբեմն հիմակ, այն ատեն՝ այդ : Այս յետամնացութիւնն երեք անգամ կը հանդիպի 19 տարուան շրջանին մէջ . իսկ որչափ դարերն զլորին՝ այնչափ պիտի յաճախեն :

Այս ակն յայտնի վրիպակ մ'է նախկին ժողովարաններու կանոնաց հակառակ :

Այս վրիպակէն առիթ քաղեցին յոյներ զկաթողիկէայց յանցաւոր համարելու, հրէական Պասեքէն առաջ Զատիկ կատարելնուն համար : Աւելորդ է ծիծաղաշարժ խնդրիս վրայ երկարել, ժամանակաւ հրէից Պասեքն մինչեւ ամարուան խորը կրնայ երկարիլ եւ մինչեւ ձմերուան սկիզբը . արդեօք կրնայ պահանջուիլ որ կաթողիկէք այն ատեն աշնան կամ ձմերուան յետաձգեն Զատիկին : Աւելորդ է ըսելն՝ թէ այն Ս. Հարք որ իրենց ժամանակի հրեայքն կը կշտամբէին գարնանամուէն առաջ Պասեք կատարելնուն համար՝ նոյնը պիտի ընէին այժմեանց ամիս մը յետաձգութեան համար :

Նիկիոյ ժողովոյն ժամանակակից զէպքերէն քաղելով կ'ըսենք.

Քրիստոնէայ թուականին Դ դարուն մէջ հրեայք երբեմն

քրիստոնէից Զատիկէն վերջը կատարած են իրենց տօնն . այլ Եկեղեցին բնաւ հոգ ըրած չէ :

Եւ ճիշդ Նիկիոյ Ժողովին յաջորդող տարին (326) այսպէս եղած է. Աղեքսանդրեան գիտնոց ցոյց տուած թուականաւ եւ լուսնարեւային շրջանին օրէնքը վարելով , որուն հաստատութիւնը յոյնք նոյն իսկ Ս. Ժողովոյն կը վերագրեն, այդ տարւոյն Զատիկին Կիւրակէն ապրիլ 3 ին է. իսկ հրէական Պատեքն (15 նիսան) ապրիլ 5 ին, երկու օր ետքը :

Աստղաբաշխական ցուցակներու վրայ ստուգելով այդ լուսնի թուականն՝ կը տեսնուի որ 326 ին միջին նոր լուսինն մարտի 20 ին առաւօտուն ժամ 9 եւ վայրկեան 33 ին է, Երուսաղեմի միջօրէականին վրայ , իսկ բուն նոր լուսինն 6 ժամ յետոյ , այսինքն երեկոյին ժամ 3 վայրկեան 40 ին : Մահիկեղջեր երեւումն յաջորդ երկուշաբթի օրուան արեւմուտքէն վերջն էր , ըստ արեւելեաց երեքշաբթին սկսելուն :

Այս լուսնին երրայական հաշիւն գրեթէ նոյն է վերնոյն . 20 մարտի 16 ժամ 47 չաքիւմ. երեկոյին ժամը վեցէն (արեւմուտք) սկսելով ժամն համարել, որ է առաւօտեան գրեթէ ժամ 10 վայր. 3 :

Արդ երբ նիսանի միջին նոր լուսինն առաւօտուն ժամն ութէն վերջ սլատահի՝ հրէից օրէնք է ամսամուտն յաջորդ օրուան թողուլ . իսկ թէ երկուշաբթի է այդ՝ յաջորդ երեքշաբթիին կը թողուի : Այս առթիւ տնպատճառ Պատեքն (15 նիսան) լուսնին 17 ին կ'իյնայ : Այսպէս 326 թուականին հրէական Պատեքն ապրիլ 5 ին երեքշաբթի օրն էր :

Որով ճիշդ Նիկիոյ Ժողովին յաջորդ տարին հրեայք քրիստոնէական Զատիկէն երկու օր վերջը կատարեցին իրենց տօնը. սակայն Ս. Հարք չապնապեցան եւ ոչ իսկ խորհել կարեւոր համարեցան :

Այս հաշուով կը տեսնուի՝ որ այդ առաջին անգամն չէր հրէից յետամնացութեանն :

18. Հետեւեալք. — Կարծենք թէ յոյնք եւ ռուք այս պատճառաւ Նիկիոյ եւ յաջորդ երկու դարերու Ս. Հարքն նգովել եւ զրպարտել չեն ուզիր. եթէ այսպէս՝ աւելի եւս անգատապարտ համարելու են Կաթողիկէ Եկեղեցին եւ ընդ որ նոր տոմարին հետեւողները, վասն զի այժմ Դ եւ Ե դարուց Ս. Հարց ժամանակէն սակաւադէպ են յոյժ այդպիսի զուգադիպութիւնք :

Յայտնի է որ 1593 ի ժողովականաց ոչ այդ զուգադիպու-

Թեանց անտեղեակ ըլլալն եւ ոչ իսկ Նիկիոյ Ժողովոյն օրինաց իմաստին անհմուտ զանուիլն կրնանք կշտամբել . վասն զի ի հարկէ ուսմունք եւ զիտութիւնք մոռցուած էին այն ատեն Յունաց մէջ :

Այլ ցաւալի է յոյժ զի Կաթողիկէից դէմ սնուցած ոգւոյն պատուին էր այդ անհիմն նշովքն :

Այլ աւելի ցաւալին է անշուշտ՝ որ այսօր անոնց յաջորդներն այդ ծիծաղաշարժ ու վայրապար խնդիրներու վրայ ալէկոծ՝ մինչ վրիպակն երթալով կ'աճի՝ հակառակ եկեղեցական պատմութեան , հակառակ երկնից աստղերուն ընթացքին , հակառակ երկրիս քաղաքակիրթ Ժողովրդոց , քայլերնին չեն փոխեր :

ՕԴՈՅ ՄԱՍՆԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ

Գիտութեանց դասին հասարակաց նստին ատեն՝ 1880 ին ջրոյ կաթիլի մը ճանապարհորդութիւնքն ու կերպարանափոխութիւնքն նկարագրեցի . մի առ մի դժեւով անգոր կաթիլին Ուլկիանու մէջէն մեկնելով կտրած երկար ուղին , բիւրազդի փոփոխութիւնքն , մինչեւ վերստին իր ընկերաց քով դարձնաւ (*Steu Memoire lu à l'Acade. roy. des Sciences de Belgique. par M. G. Van der Mensbrugghe*) :

Անցեալ տարի փուշոյ հատի մը պատմութեան քանի մը հատուածներն տուի . նկարագրեցի հոն մեր բնակարաններու եւ Ժողովատեղեաց մէջ՝ դործարաններու եւ բովուց իսկ թափանցող հատիկն . ըսի թէ երբեմն ո՛րչափ մեծ է անոնց վիասն , անոնց քանակն մթնոլորտի մէջ . ջանացի համոզել՝ թէ այդ հատիկներն՝ ջնջին այո՝ այլ արչալուծի եւ վերջալուծի հրաշալիքն կը ծնանին . վասն զի լուսոյ ամեն ուղղութեամբ ցրուելուն պատճառ են : (*Steu Revue des quest. scientif. Bruxelles Juillet 1894*) :

Այսօր նմանապէս մանրիկ էակիկ մ'ալ կ'ուզէ զիս զբաղեցունել . մանաւանդ սա աւելի մանրիկ , վասն զի ջրոյ կաթիլէն եւ փուշոյ հատիկէն շատ աւելի թեթեւ է : Պիտի ներքողեմ

այս մանրիկ էակիւ քանի՜ սքանչելիքն . վերիններէն աւելի աշխոյժ է եւ աւելի գործունեայ . այդ մանրիկն օդոյ մասնիկին է :

Թէպէտ եւ սա եւ իր ընկերքն մեր ուշադրութենէն բոլորովին խուսափին՝ սակայն ամեն տեղ կը շրջապատեն զմեզ եւ նոյն իսկ մեր կազմութեան մէջ կը մանեն , այնպէս որ առանց ատենց անձանօթ պաշտօնին ոչ հնար էր մեզ շնչել , ապրիլ , կեալ :

Հնամբ է միթէ այս մասնիկներէն մին առանձնացունել . ոչ կը քննենք եւ ոչ կը ջանանք . նոյն իսկ ենթադրելով թէ հնարինք՝ սակայն չենք կարող տեսնել . սակայն փոխանակ մասնիկ մը հնարելու՝ դիւրաւ մասնիկ մը կրնանք ստանալ եւ սահմանել :

Թէպէտ ոչ ամենէն պարզ՝ այլ ամենէն ուսուցիչ ճամբով կրնանք դրօսնուլ , ահա ժամացուցի ապակի մը եւ փոքր աման մը յորում ջուր կայ . եթէ ժամացուցի ապակին գոգաւոր երեսսովն թեթեւ մը ծռենք եւ ջրոյ մէջ մխենք՝ լուսաւոր դիմ մը կ'երևի ապտիւոյն գոգաւոր մասին թրջած կողմն զծելով . արդեւ մը կարծես ջրոյ յառաջ խաղալն եւ կորնթարդ երեսն թանալ չթողուր . ինչ է այդ . Այդ արդեւքն օդոյ մասնիկանց գումարն է . որոց վրայ թեթեւ ճնշում մ'ազդելնուս համար՝ կաշային գնդիկներու ձեւով կ'աւանդուին :

Երբ դեռ մենք ճնշումն գործածած չէինք՝ այդ գնդիկն մեր մթնոլորտին հարիւրաւոր խաւերուն մասն էր , այսինքն է երկրադուռտա շրջապատող անհուն թանձրութեամբ կաշային մարմննոյն , որուն մէջ մի մասնիկներն իրենցմէ վեր եղողներուն ծանրութիւնն կը կրեն եւ իրենց աակ գտնուողներուն կ'ազդեն նոյնն իրենց ծանրութիւնն ալ աւելցունելով . այնպէս որ այս ամենուն ծանրութիւնն կամ ճնշումն ծովեզերաց վրայ առ քառակուսի հարիւրորդամեզր հաւասար է 1 հազարակր . 033 ի , միջին հաշուով . Մեր գնդիկն ալ (օդոյ) նոյն այս ճնշման աակ է , վասն զի ամբողջովին կը փոխադրուի ջրէն՝ որ ճնշական չէ չառայլ առաձգական է կատարելապէս : Սրտաբին օդոյն այս ճնշման վրայ աւելցունելու է նաեւ օդոյ գնդիկէն վեր բարձրացող հեղուկին ազդածն :

Ջրոյ այսպէս լուսաւոր կերպով գնդիկն պաշարելովն կը տեսնուի օդային մասնիկն . բայց ինչո՞ւ այդ կանոնաւոր գնդաձեւն եւ ոչ ուրիշ ձեւ մը . Ո՞ր խնդրելու ենք ձեւակերպիչ գորութիւնն որուն արգեանց վրայ այսպէս կ'ըզմայլենք , եւ որ

այսպէս գաղտնի կը դործէ. մի գուցէ օդային գնդիկին մէջ, Սակայն էապէս այդ զօրութիւն նոյն իսկ այդ հեղանիւթին մանրիկ ու նուրբ մասնկին մէջն է որով օդային գնդիկն կը չըջապատի, եւ բուն իսկ դործողն աւելի նուրբ է, 1/20,000 ի չափ:

Այդ անօտր պատեանն կամ խաւն կծկիչ յատկութիւն ունի եւ կորանալով ամենափոքր տեղ կը գրաւէ, կը ճնշէ իր կորութեամբն ներքին օդոյն վրայ, եւ այս այնչափ աւելի զօրութեամբ՝ որչափ փոքրագոյն է գնդիկն. եւ որչափ փոքր այնչափ աւելի կանոնաւոր կըրակ:

Այլ մարթ է գիտնալ թէ ո՞վ այսչափ մանրամասն պրպտակը է բնութիւնն. այդ ինքն է Joseph Plateau որ մտաց աչօք հեղանիւթներու մասնկանց զօրութեանց սքանչելի հաւասարակշռութիւնն գիտեց. մտաց աչօք, վասն զի աւաղ է լսելն թէ ընդերկար զաչացու ապրեցաւ. այդ անմահ յիշատակօք ի անուան աշխատութիւնքն կաճառին ձեռքով հրատարակուեցան: Այս ամեն փորձերուն հայրն դա է՝ Մտաց սքանչելի կորով, որ բերաւոր հակառակաց եւ արդելքներու դէմ մաքառելով անհնարինն հնարաւոր կ'ընէ յամառ աշխատութեամբ:

Դիտնանք մեր ժամացուցին ապակեոյն տակ բանտուած օդային պղպշակին. ուս թէ միջնորոտային ճնշման եւ թէ ջրաբանակահին՝ վասն զի իրմէ վեր բարձրացած է՝ եւ թէ գնդիկն չըջապատող երեք զօրութեան ենթակայ է. ինչպէս այդչափ բուն զօրութեան դէմ այդ նուրբ եւ անօտր ու թոյլ օդիկն կը դիմանայ, վասն զի այդ մասնկանց մէջ իրարու հակառակող զօրութիւն մը կայ, եւ այս այնչափ աւելի՝ որչափ ճնշումն աւելի է՝ Այնպէս որ եթէ այդ ճնշումն դադրել կամ խափանել կարենայ՝ գնդիկն իր ընդարձակութիւնն կը գտնէ տտրածուելով: Այս պատճառաւ այդ ջրապատ գնդիկներու մէջ կատարեալ է խաղաղութիւնն: Սակայն բնագիտաց կողմէ վարդապետուած հաւասարակշռութեան պայմանն այս խնդրոյս մէջ բաւական ճշդութեամբ եթէ առնունք՝ վայ մեղի. վասն զի եթէ մտաց աչօք հեղուկին եւ օդոյ այս վերջին մասնիկներն հաղարաւոր անգամ մեծցունենք՝ իրարու հետ ահաւոր մարտ ու հակառակութիւն պիտի տեսնէինք, որոնց քով պատմական ահաւոր դէպքերն իբր խաղալիք պիտի նկատուէին: Սակայն այս մասամբ զեռ չխօսած՝ տեսնենք թէ ինչ միջոցներով այս ամենամանրիկ էակներն կը մարանչին իրարու դէմ:

Դիտենք որ օդոյ ամեն մասնիկիք զիրար կը մղեն. եւ այս

այնչափ աւելի՝ որչափ աւելի ճնշուին : Այլ օդն չըջապատող հեղուկին մասնիկները ողեւորողն ո՞վ է :

Վերացական խնդիրներով զբաղելու հարկ չկայ, հասարակաց ծանօթ քանի մը յիշատակներ նորոգենք մտաց մէջ. եթէ թրջած բան մը սենեկի մէջ դնենք, կամաց կամաց կը ցամքի եւ ի սպառ կը չորնայ. այսպէս հեղեղային անձրեւէ յետոյ քաղաքին սալաշատակներն կը ցամքին շուտով. եթէ կշոյ թաթին մէջ գաւաթ մը ջուր դնենք՝ որչափ ժամանակ անցնի՝ այնչափ աւելի կը նուազի կշիռն : Այս եւ ասոր նման խել մը փորձեր բաւական չէն միթէ հաստատելու՝ թէ ջրոյ երեսէն մասնիկներն միշտ թնչելու հետ են : Գոլորչոյ՝ այլ անտեսանելի դոլորչոյ թեթեւութեամբ կը ցնդին մթնոլորտին կամ չըջակայ օդոյն մէջ. այլ գիտենք որ հեղուկ վիճակէ ի կաղային անցնիլ աստիճանաւ կը կատարուի. որով հարկ է ընդունիլ՝ թէ որչափ հեղուկի մը վերին խաւերուն բարձրանանք՝ այնչափ մասնկանց իրարմէ հեռաւորութիւնն կ'առաւելու : Մասնկանց անջատմամբ կծկիչ զօրութիւնն կ'աւելնայ, որով հեղուկին մակերեսային կ'ամփոփի : Այդ զօրութիւններն մեր օդային գնդիկին ծնողքն են :

Իսկ կրկին նախանձորդ կամ հակառակող մասնկանց գործոյն դալով՝ յորոց ոմանք կը աքնին օդային գնդիկին մէջ սպրդիլ, եւ միւսներն կը խորհին ջրային մասնիկներու մէջ թափանցել, ահա տեսածնիս . այլ մտքով նկատենք այս սքանչելիքն. ահա հեղանիւթի մասնիկներն կը բաժնուին իրարմէ սահմանիչ մակերեսութիւն մօտ, ոմանք գնդիկին օդոյն մէջ կը թափանցեն եւ ոմանք անոնց թողած տեղն իսկոյն կը զբաւեն : Ո՛ սքանչելեացս. օդոյ մէջ մանող ջրոյ գնդիկներն ալ ըստ իրենց կարողին մեծ եռանդեամբ մանրամանր մասնիկներու վերածուիլ կը ջանան եւ օդէն աւելի թեթեւ գոլորչի դոյացունել : Եւ վասն զի ջուրն կատարեալ առաձգականութիւն ունի, իւրաքանչիւր փախստական գնդաձեւ պղպջակ՝ ջրոյն ամբողջ զանդուածին թոթոական շարժումն կը պատճառէ :

Իսկ օդային մասնիկներն կը ջանան այդ փախստականներու տեղը զբաւել, հազիւ թէ երկու թոթոացող հեղուկ մասնիկներու մէջ կը սողոսկի օդոյն մասնիկն՝ երկրորդն պատրաստ է ուրիշ թոթոման բացած տեղն զբաւելու : Այս ճամբով շատ մը օդային մասնիկներ մէկ մէկու ետեւէ մինչեւ ջրոյն խորն կը թափանցեն. հոն սաստիկ ճնշուելով՝ յարակցութիւնն կ'աճի, մինչդեռ ջրոյն կը նուազի : Գնդիկէն օդոյ մէջ դիմող ջրային

գողչւոյ մասնիկներն ինչպէս օդն կը յաղեցունեն՝ այսպէս ալ օդային մասնիկներն երբ զջուրն յաղեցունեն՝ կը կասին:

Ըստ այսմ, որչափ աւելի է ցուրտն՝ որով որչափ աւելի է ջրոյ յարակցութիւնն՝ այնչափ աւելի օդ կրնայ լուծուիլ. անշուշտ այս պատճառաւ է որ թարեխառնութեան ամենաշնչին փոխոխութիւնն ջրոյ լուծողականութեան չափն կը փոխէ:

Նոյնպէս դիւրաւ կը հասկցուի՝ որ որչափ արտաքին ճնշումն աւելնայ՝ ջրոյ մէջ լուծուած օդոյ քանակն կը շատնայ: Կազային ըմպելեաց հիմնական բացատրութիւնն չէ՞ այս:

Վասն զի օդն ջրոյ հետ այսպէս մարմնակցած է ըսինք՝ եթէ անջատել ուզենք երկուքն իրարմէ՝ վարանելու չենք. դիւրին է զօրծն. զէթ մեծ մասամբ կրնանք զատել զանոնք: Քանի մը վայրկեան եթէ տաքցունենք՝ ամանին կողերն ուղղակիներով կը լեցուին, եւ ջրոյն ծոցէն եփ եփ դուրս կ'ելլին: Իսկ թէ բոլորովին օդը վանել ուզենք՝ երկար եփելու է. ջուրը ցրտանալուն յարակցութիւնն մեծ է: Կ'ուզեմ Պ. Donny ի փորձերը յիշել աստ. սա ջրոյն մէջէն բոլորովին օդը վանելով՝ զուտ ջրոյն որչափ մեծ յարակցութիւն ունենալն ցոյց տուաւ: Ո՛վ չգիտեր այսօր՝ թէ այս պայմաններով ջուրն հոռու համար սովորական հոացմանէն շատ բարձր ջերմութեան կտրօտ է. որ մեքենադործ չգիտեր այսօր՝ թէ կաթնասնելու մէջ գտնուած ջուրն յորմէ շոգի պիտի ելլէ՝ պէտք է օգաւորի, որպէս զի մեքենայն կանոնաւոր շարժի եւ պայթելու վախ չըլլայ:

(Շարայարեյի)

Աստղաբաշխականք

Պ. Lowell ի Հրատի վրայ դիտողութիւնքն. — Այս տարւոյ սկիզբէն Պ. Lowell իր Հրատի վրայ կատարած դիտողութիւնքն հաղորդեց Աստղաբաշխական Ընկերութեան. Այս յօդուածներուն մէջ ստեպ կը յիշէ Պ. Flammarion ի Հրատի նուիրած գիրքն: Իր դիտաւոր ջանքն եղած է մթնոլորտային շարժմունքէն ծնած արեգեղներէն ազատել իր դիտողութիւնքն.

այժմեան հեռագէտք բաւական զօրաւոր են, պէտք է Աստղագէտն խորհի եւ օդոյ խափանարար արգելքն ոչնչացունէ :

Ամառ ժամանակ ծովուն վրայ եւ կամ արեւակէզ ծովափին՝ գոյորշոյ թրթռացումն աչքով կը տեսնուի, մինչդեռ ձմեռն շատ տկար է այդ : Այս թրթռումնքն երեք չորս հարիւր անգամ մեծցունենք, ինչ կ'ըլլայ . կատարելապէս այնպիսի զիրք մը՝ որուն թերթերն երազութեամբ դարձունենք, զիր կը տեսնենք, այլ կարլալ հնար չէ. որչափ հնար է մաքուր ըլլայ թող տպագրութիւնն :

Ուտտի Պ. Lowell Ամերիկեան Միացեալ Նահանգաց ամենէն մաքուր օդն բնորելով՝ Արիզոնայի մէջ Արեքիբա լեռան վրայ 2200 մեղր բարձրութեամբ իր դիտարանն հաստատեց :

Անհնար է այդ տեղերուն մթնոլորտին պայծառութեան եւ անշարժութեան վրայ կատարեալ գաղափար մը տալ . գոլոշին ու ծովին սեան պէս ուղիղ կը բարձրանան հոն : Այս առաւելութեամբ դիտողութեանց ժամանակ նորանոր անծանօթ նշմարներ նկատած է, ցարդ անծանօթ Հրատի վրայ : Պ. Maurice Ballot ի աշխատակցութեամբ պծած պատկերներուն վրայ՝ նախ Հրատի բեւեռային ձիւներն ցոյց կուտայ, որոնց վրայ երկայն ու լայն խրամներ կան : Ուշադրութիւն կը գրաւեն այդ ձիւներուն կամ սառնարաններուն չորս կողմը շրջանակող եղերուածքն, խոր երկնագոյն. ընդարձակ ջրի կատարեալ պատկեր, իսկ միւս մթին սպիներն՝ զորս առհասարակ ծով կը համարին, կ'ըսէ թէ կանաչագոյն են ոչ թէ երկնագոյն. եւ ասոնց ըստ եղանակաց առած պոյնն ու ձեւն պարզելով՝ բուսականութիւն կը համարէ ու կը սնդէ ըլլալ :

Ջրանցից խնդրոյն նկատմամբ՝ նոյն կանաչ գոյնին պատճառաւ Պ. Lowell կը պնդէ թէ բուսականաց զծեր են : Դեռ շատ մը մինչեւ այսօր անծանօթներ դտած է այդ պուրակային տողերէն. որոնց միշտ ուղիղ գիծն՝ ուղիղ անկիւնն ալ ոչ պակաս, երկրաչափական ընդհատմունքն եւ հատմանց վրայ կադմուած բոլորակ սպիներն, զորս Ովասիս կը կոչէ, բացարձակ ազատ կամաց արդիւնք՝ կը հատատեն կ'ըսէ՝ թէ Հրատ բնակիչ ունի, մեղմէ այլազան, այլ վեհ ու բարձր մեռէ :

Խաւարումէ դուրս արեգակնային պսակին լուսանկարն.—

Պ. D. E. Packer Պըրմիսկէօմ բնակող՝ նոր արդիւնք ստացեր է լուսանկարի ձեռքով, որ եթէ ստուգուի՝ թէ ի գործնականին

եւ թէ ի տնտեսականին օգտակար է յոյժ : Սա կ'ըսէ՝ թէ այլ եւ այլ մտտաղնիւրու թերթերու ետեւէն կարող եղեր է արեււային պսակին պատկերներն ստանալ : Մետաղէ այս թերթեր՝ ըստ իրենց թանձրութեան եւ ելեկտրական հազորականութեան՝ ամենէն աւելի բեկբեկող ճառագայթմունքն (բաց մանիշակապոյն) կը թափանցեն իրենց մէջէն : Գործածուած թերթերն են անագ, կապար, պղինձ : Եւ վասն զի ապակին յինքեան կ'ամբարէ լոյսն՝ լաւ է պարզ մտաղէ խուփ մը դնել առարկայական ապակւոյն տեղ պղտիկ ծակով մը :

Արդիւնքն զարմանալի է. արեւային պսակին բաց ի հասարակածին վրայ ունեցած տարածութենէն՝ ուշադրաւ է նաեւ տեղ տեղ երեք կամ չորս դարձուածքով անուածն ճառագայթն : Պսակին զօրաւոր լուսոյն ազդած ուժով պատկերն՝ մինչ սկաւառակն տփոյն ու տկար է, ենթադրել կուտան Պ. Packer ի՝ թէ պսակն ելեկտրական լուսոյ հոսմունք ըլլալ :

Ասոր համանման փորձերն Dr. G. Lebon երկու տարիէ ի վեր կը կատարէ, որոնց տեղեկութիւնն տուաւ վերջերս Բարիզի Գիտութեանց Կաճառին :

Մատրիտի յունուար 29/10 փետր.ի օդաքարն. — Հաւաստի ու ստոյգ երկնաքարերու իյնալն բաղդատմամբ սակաւաթիւ է : Վերջերս Մատրիան ահարեկողն ասոնց կարգէն է. որով քանի մը բառ ըսելն ոչ աւելորդ :

Ահա նախ Սպանիոյ մայրաքաղաքին արքայական դիտարանին պաշտօնական ծանուցումն :

«Երկուշաբթի 10 փետրուար առաւօտեան ժամը 9,29 հաւրաւ արեւմուտքէն դէպ ի հիւսիս արեւելք շարժող պղտիկ ամպէ զօրաւոր լոյս մը տեսնուեցաւ, մէկ ու կէս վայրկեան ետքը սոսկալի ճայթիւն մը եղաւ, որուն շարք մը երկրորդական ոչ այդչափ զօրաւոր պայթիւններ յաջորդեցին. հետինն ու շէնք ցնցուելով : Ապա արեւելքի կողմը կարմիր ամպ մը երեւցաւ ընդերկար : Դիտարանին տեսուչներն օդաքարի արդիւնք կը համարին : Ճայթիւնէն մինչեւ լսելի ըլլալն այդ ձայնին անցած ժամանակն՝ կը յայտնէ՝ որ օդաքարն երկրէս չառ հեռուն պայթած է :»

Ծանուցումը կ'աւելցունէր՝ որ երկնաքարէն որ եւ է հետք պտնուած չէ : Թուի թէ՝ վերջը՝ դեռ ջերմ գորշախայտ քարի բաղմամբիւ մանր կտորներ գտնուեր են Մատրիտի մէջ :

Այս պաշտօնական ծանուցումին հետ միասին անօգուտ չէ կարծեմ յաջորդ հեռագրական լուրն կցել:

«Երկուշաբթի առաւօտ 9½ին մեծ երկնաքար մը Մատրիտի մթնոլորտին վրայ պայթեցաւ. լուսաւոր պայծառութիւն մ'ընկերացած էր, որոն յաջորդեց ահաւոր ճայթիւն մը. ժողովուրդն ամբողջ ահուկողի մէջ: Օգոյ թրթումանէն բոլոր չէնքերը ցնցուեցան եւ շատ մը ապակիներ խորտակեցան: Ճայթման ատեն երկինք պայծառ էր եւ արեւ կը փայլէր: Երկնքի վրայ բաց ի ճերմակ կարմրապատ ամպէ՝ որ երազ երազ դէպ արեւելք կը վազէր՝ թեթեւ փոշւոյ հետք մը թողլով՝ չկար ուրիշ բան: Առհասարակ էր ժողովրդեան ամբոխն. շատ խանութներ փակեցան: Տուներն ոչ թէ միայն ցնցուեցան՝ այլ եւ ոմանք փլան: Միացեալ Նահանգաց դեսպանատան սենեակներուն ոմանց միջնորմն եւ պատուհաններն ինկան. նոյնպէս շատ տուներու մէջ, ճայթման սաստկութենէն՝ Մատրիտէն շատ հեռուն լսուեցաւ ճայնն. Կուստալայարաի մէջ՝ 75,000 մեղր՝ դեռ աւելի սաստիկ էր. Սարակոսայէն՝ որ 341,000 մեղր է լսուեցաւ:»

Սպանիոյ ուրիշ տեղերն ալ ըսին թէ երեւցան օդաքարեր, սակայն չհաստատուեցաւ այս լուր:

Ս Ա Ն Ր Գ Ի Տ Ե Լ Ի Ք

ԱՌՈՋԱՊԱՀԱԿԱՆՔ

Արդսգարդի մեջ կալանաւթեան եթերի (ether de pétrole) վնասներն. — Դեղարաններու մէջ ամեն տեսակ հիւանդութիւններ դարմանող դեղերու քով անոնց ծնունդ տուողներն ալ կան: Վերջերս դեղորէից կարդին մէջ դասուած է կալանաւթի եթերն՝ որ վերջնոց կատարեալ պոսկին կրնայ արժանանալ:

Այսօր գրեթէ առհասարակ կը գործածուի այս նիւթա զըլխու մաղերն լուսաւո համար. չուտով եւ շատ լաւ կը մաքրուին եւ թեփն կ'անհետանայ. եթէ դեղագործին խորհուրդ հարցունէք՝ չվարանիր ըսելու՝ թէ ամենէն անյլնաս եւ միանգամայն օգտակարն է: Սակայն զգուշացէք. վասն զի իր ծնողէն՝ կալանաւթէն շատ աւելի շուտ կը բորբոքի:

Եթէ գործածուած սենեկին մէջ բաց կրակ կայ, ճրագ մը, վառարան մը, կրակարան, եւնս, մեղրերով հեռուն տարածուելով գոլշին կը բռնկի. պայթիւն մը՝ եւ վայրկեանի մէջ արմատէն կը մաքրէ մազերն, եթէ զեռ աւելի ծանր վտանգ չծընանի. օրինակներ շատ ունինք. անգամ մը 1, 07 մեղր հերապանին գէսն վայրկեանի մէջ մոխիր դարձաւ:

Անշուշտ ենք թէ զեռ աւելի փառաւորն պիտի բռնանի, սակայն շատ փափաքելի փորձ չէ այս կարծեմ:

Պանրին մէջ նոր խարդախութիւն. — Մարգարտաճարպն (margarine) որ կարագի զլխաւոր խարդախողն է, որով տարբանք ընդունայն տեղ կը յոգնին եւ շատ անգամ անօգուտ փորձերով, այսօր պանիրն ալ խարդախելու սկսած է գործածուիլ:

Իտալիոյ Ուտինէ քաղքին վերջերս զրած յուցահանդիսին մէջ հաղարաւոր տեսակ բաղադրութիւններ կրցաւ գտնել Բասքուալինի ուսուցիչն պանիրներու մէջ. որոնց զլխաւորներն են մարգարտաճարպ, ձէթ, եւնս:

Եթէ կարագի մէջ անախորժ է մարգարտաճարպն տեսնել՝ նոյնպէս է նաեւ պանիրն. նորօրինակ եւ նոր խարդախութիւն:

Շարժական վառարաններ. — Ամեն տարի Եւրոպիոյ մէջ շարժական վառարաններու պատճառած վնասն բաւական չըլլալով՝ վերջի տարիներուս հոս ալ այգօրինակ գործիներ սկսած են սովորական դառնալ:

Այս տարի ձմերուսն առաջին ամիսներուն մէջ միայն Բարիզ եւ Նիշակայքն աչքի առջեւ բերելով՝ մի առ մի համբոնք պատահարներն. զիսնալով որ այդ ամիսներուն ձմեռն թեթեւ ըլլալով ի Բարիզ՝ սակաւաթիւ եղած է այդ գործիներուն կիրառութիւնն:

— Բարիզի մէջ Օրլէանի պողոտայն այր եւ կին զինեւաճառք եւ իրենց տասնեւութ տարեկան աղջիկն մօզ մնացած էր ծխապառ ալիտի անշնչանային. պատճառ՝ շարժական վառարանն:

Աղջիկն եւ այրն վերակենդանացան, իսկ կինն ծանր վրտանդի է:

— Մարլի լը Բուա, Մեծ փողոց, այր եւ կին հարուստ հանդստակեացներ՝ որոնք ննջատենեկին մէջ շարժական վառա-

րան գրած էին՝ շնչասպառ եղան. կինը մեռաւ, այրն յուսահատ վիճակի է։

— Բօր Մարիի քաղաքապետն, օգնականն, ուրիշ մը, քարտուղարն, շարժական վառարանով տաքցած սրահի մը մէջ էին՝ յանկարծ քաղաքապետն ակոտէն վար ինկաւ շնչասպառ, օգնականն փորձեց ոտք ելլալ այլ հազիւ մինչեւ պատուհան հասաւ ու բանալով օդնութիւն կանչեց. քսանուչորս ժամ անկողնոյ մէջ մնալ դատապարտուեցան ամենքն ալ։

— Ի Լըվալուա Բէրրէ, ժիւս փողոց, այր եւ կին իրենց տնպահութեան ժամանակ շնչահեղձ եղան. թէպէտ եւ կրցին կենդանապահուիլ։

— ՅԱրժանդէօյլ այր եւ կին ծխամեռ ինկած էին սենեկին մէջ. անհնար եղաւ կեանքի կոչել. միայն իրենց ութամեայ աղջիկին կրցաւ պրծիլ։

Դեռ օրինակներ պակաս չեն. մենք Պատ. Ընթերցողաց տալով այս օրինակներն՝ կը պատուիրենք այդ շարժական կոչուած անճոռնի վառարաններէն զգուշանալ. Ի՞նչ է պատճառն. վասն զի այդ ածուխն կամ նաւթն որ կը վառի՝ սենեկին մէջ դանդաղ օդոյն թթուածինը կը ծծէ, գիտենք որ թթուածինն է կրակին կամ ճրագին մոռնոյ տուողն, եւ անոր տեղ բնածխական թթու (acide carbonique) եւ ճարպային կազեր (ջրածնի խառնուրդ) կ'արձակէ, որ թոքերուն արտադրածն է։ Թոքերն ալ թթուածին կ'ուզեն եւ մաքուր, մինչ անոր տեղ իրենց արտաքսածն եւ աւելի աղտեղին ստիպուելով չնչել . . . կ'ենթադրուի ըլլալիքն։

Այրածի դարման. — Կենաց յանկարծական պատահարներուն՝ որք կրնան վտանգ սպառնալ, մարդ պէտք է օգնել իր նմանին, կամ գէթ յիշատակ չտայ։ Այս պատահարներէն են շնչասպառութիւն, թունաւորիւն, մարիւն, արիւն հոսելն, Յայտնի է թէ բժշկի մը գալն կարեւոր է, բայց մինչեւ որ գայ՝ պէտք է օգնել հիւանդին, չատ անգամ մահուընէ ազատելով կամ գէթ թեթեւցունելով ցաւն։

Շտա տեղեր այս եւ նման յանկարծական պատահարներու ժամանակ նախնական դարմաններն ամբողջ ժողովրդեան կը սովորեցունեն, ի հարկին չուարած չմնալու համար։

Այրածի վրայ խօսիլ ուղեւում որ եւ է պատճառէ առաջ եւ կած այրածն մորթային հիւսուածքն կ'ապականէ հինգ այլ եւ այլ տուրիճանաւ. Առաջինն է՝ մորթին պարզ կարմրիւն. երկ-

բորդն՝ մորթային ջրալից ուռեցքն, երրորդն՝ մորթին եւ ան-
միջապէս ներքին հիւսուածքին քիչ կամ շատ ապականութիւնն,
իսկ աւելին չորրորդ եւ հինգերորդ տատիճանքն են: Վերջինն
մինչեւ ոսկերքն կը թափանցէ եւ կը վնասէ: Բոցը զանազան
աստիճանաւ կրնայ այրել, հրաչէկ երկաթն եւ եռացող ջուրն
գրեթէ հաստատուն աստիճանաւ: Այրածին ծանրութիւնն՝ ան-
զամէն՝ տարածութենէն եւ աստիճանէն կը դատուի: Եթէ թե-
թեւ աստիճանաւ՝ այլ ընդարձակ է այրածն՝ մահացու է շատ
անդամ: Կարանաւթի եթերն, կպրահուածքն, ծծմբական եթերն,
դղուշութեամբ գործածելու է. սենեկին մէջ՝ թէպէտ հետուն
իսկ՝ ճրագ կամ կրակ դանուելու չէ. վասն զի գոլոշին տարած-
ուելով կը բռնկի եւ կը պայթի մեծ վնաս պատճառելով. մանա-
ւանդ առաջինն:

Որ եւ է պատճառէ եթէ մէկուն ամբողջ զգեստը բոց առ-
նէ՝ պէտք է իսկոյն դետին փռուիլ ու զլորտկելով սաստիկ
ճնշմամբ մարել բոցն: Եթէ մազերն կամ զգեստին մէկ մասը
բռնկի՝ մերձակայ որ եւ է ծածկոց մը ձգելու է վրան ուժով,
կամ զգեստին մնացած մասովն պէտք է ծածկել ու ճնշել լոցը
խնդրելու ջանալով: Եթէ օգնութեան հասնող ըլլայ՝ ջուր չխռն-
դրէ, այլ զգեստները հանելով փաթթէ այրողն ու գետին ձգե-
լով սկսի տապալակել: Երբ բոցը մարի՝ այն ատեն առատ ջրով
ողողէ մինչեւ ոսկրներն. վասն զի տաքցած ու անուխ դարձած
զգեստն դեռ կ'այրէ մարմինը:

Եթէ եռացած ջրէ կամ չոգիէն է այրածն՝ նոյնպէս առատ
ջրով պէտք է ողողել զգեստներն ու մարմինն: Ապա պառկե-
լունել անկողնի մը վրայ, տաք ու զօրացուցիչ ըմպելի մը տալ
քանի մը կուլ: Վասն զի սաստիկ այրուածքէ վերջ մարմնոյն
շերմութիւնն կ'ըսկսի նուազիլ. եւ յետոյ հանուեցունել, Հան-
ուեցունելու համար սուր մկրատով կտրելու է զգեստները,
մարմնոյն կպածները քաշելու չէ. ժամանակաւ ինքն իրեն կ'իյ-
նան: Այտուցները չպատռել, շատ շատ կոնխաւ տաքցած անե-
ղով մը ծակել ամենէն մեծերը, որպէս զի ջուրը ելլայ, առանց
մորթը հանելու:

Որ եւ է վերք՝ ինչ աստիճանի եւ ինչ տարածութեան որ
ըլլայ պէտք է օժիլ ու վաղկայով պատել. օժանդակաց ամենէն
զլիսաւորն է ձէթ եւ կրաջուր: Օղէն պահպանելու է. ուստի ե-
թէ այդ չկայ՝ նուրբ ու մաքուր կտաւը ձէթի մէջ թաթախե-
լով կրնայ պատուիլ:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՒՀԻ ՄՈՆԻԳԱՅԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՂԱՆՆԵՍ Վ. ԱՔԻԵՆԱՆ

(Շարունակութիւն տես քիւ 16)

Եւ ահա խոնարհութեամբ կը շարունակէ՝ ըսելով . « Բայց հազիւ թէ աչքերս գէպի վեր քեզ դարձուցի , ո՞վ Աստուած իմ, երկու բան տեսայ. նախ տեսայ որ զեռ շատ բան կար տեսնալու. եւ երկրորդ տեսայ որ տեսնալու համար հարկաւոր եղած պայմանները չունէի. Եւ այն կրկին տեսութեան վրայ ունեցած լոյսս այն աստիճանն աստիկ եւ կենդանի լոյս մ'էր, որ մի եւ նոյն ժամանակ ուրիշ կրկին զգացմունքներ առաջ բերաւ, որոնք զիս սկսան չարչրկել. մէկ կողմէն բաղձանք մը, եւ միւս կողմէն վախ մը. Զիս քեզմէ այնչափ հեռու տեսնալով, եւ այն խորայատակ եւ մթին խորշերուն մէջ ուր որ մեղքերս բանտարկած էին հողիս, յուսահատութիւնը պիտի տիրէր վրաս թէ որ չլսէի քու ձայնդ որ կը գոչէր. սիրտ առ, ես եմ այն մոռնողն որ կը ծնցնէ քաջեր. մեծցիր՝ որպէս զի ուտես զիս. բայց զիս ուտելովդ՝ ես ի քեզ պիտի չփոխուիմ, ինչպէս նիւթական կերակրոց համար կ'ըլլայ, բայց դուն ինծի պիտի փոխուիս» Եւ քիչ մը ետքը՝ երբ նորանոր անձկութիւններ իւր սիրտը տակն ու վրայ կ'ընէին, անգուգական իշխանութեամբ մը կը լսէ նոյն ձայն որ կ'ըսէ. «Ես եմ որ էն» «Լսեցի սրտիս մէջ այն ձայնը, կ'ըսէ Ս. Օգոստինոս , եւ նոյն ընդ նոյն ամէն տարակոյսներս փարատեցան . եւ ասոր վրայ ես իմ գոյութեանս վրայ գուցէ աւելի զւրութեամբ կրնայի երկրայիլ, քան թէ ճշմարտութեան գոյութեան վրայ»

Այս զարմանալի օրինակ մ'է թէ ինչ կերպով հասարակ-

օրէն ճշմարտութիւնը կը ծագի հոգւոյ մէջ ։ Երկայն ժամանակ փնտռելէն, չառ գիրքեր կարդալէն, ինքն իրեն կամ ուրիշներու հետ վիճարանելէն ետքը, յանկարծ առանց մարդու մը օգնութեան, զոհողութիւն մը ընելէն անմիջապէս վերջը, ամէն զրգուարութիւնները՝ սաստիկ հովի մը պէս կը դադրին, մշուշները կը փարատին, եւ ճշմարտութեան արեւը հոգւոյն վրայ կը ծագի։ Եւ ասոր ծագումը կը հասկցուի լուսոյ եւ խաղաղութեան ներքին ազդեցութենէ մը, որ կ'ապշեցնէ զմարդ։ Եւ կը զարմանայ թէ ինչպէս կրցեր է տարակուսիլ անոր գոյութեանը վրայ, մինչդեռ այնքան պայծառութեամբ կը շողայ. եւ ինչպէս կարելի է՝ անգամ մը տեսնալէն ետեւ, նոյն տարակուսանաց մէջ իյնալը ։ Մանաւանդ թէ երբոր այն լոյսը եւ խաղաղութիւնը կը յաջորդէ խոր մթութեանց եւ երկայն ու դժնդակ անստուգութեանց, այն ատեն այնչափ ուժգին կ'ըլլայ հիացումն որ ալ անկարելի կ'ըլլայ հեռանալ անկից ։ Բայց այն լոյսը որչափ ալ կենդանի ըլլայ՝ չբաւէր. որովհետեւ Յիսուսի Քրիստոսի կերպարանքին՝ այսպէս ըսելու համար, մէկ կողմը միայն կը լուսաւորէ։ Պղատոնի գիրքերը կարդալով՝ Օգոստինոս ազօտ տեսիլ մը կ'ունենայ Աստուծոյ բնութեանն եւ Բանին Աստուծոյ գոյութեանը վրայ։ Բայց՝ ինչպէս արդէն ըսինք, մարմնացեալ Բանին ո՛չ սէրը, եւ ո՛չ անձնութեանները կը տեսնայ։ Անտեսանելի, փառաւոր, ամէն արարածներէ հեռու Աստուծոյ մը զազափարը կ'ունենայ։ Ինչպէս նաեւ անկատար կերպով կը նշմարէ աստուածային բնութեան յարաբերութեանց մէջէն բան մ'ալ, այն աստուածային բնութենէն։ Լոյս մը ի լուսոյ բղխելով՝ եւ հաւասար ըլլալով այն լուսոյ. մեծ տեսութիւն մ'է սա անտարափոյս, մանաւանդ թէ այն աստիճան մեծ է որ կրնանք երկբայիլ թէ իրօք մարդկային խելքը կրցաւ հասնիլ մինչեւ հոն։ չկրնա՞ր ըլլալ որ այս բանս նախնեաց աւանդութիւններուն մէկ արձագանգն ըլլայ, զորն որ Պղատոնի գեղեցիկ հոգին հաւատարմաբար եւ ճշգիւ լսած եւ ըմբռնած ըլլայ։ Բայց երեւակայել աղքատ Աստուած մը, խոնարհ Աստուած մը, երկիրքէն մարդս փրկելու համար իջած Աստուած մը, մարդասէր Աստուած մը, եւ մարդս փրկելու համար չարչարուիլ եւ մեռնիլ յանձն առնող Աստուած մը. ահաւասիկ այս ամեն բաներս ո՛չ Պղատոն, ո՛չ Սոկրատէս, ո՛չ Կիկերոն, ո՛չ Վիրգիլիոս կրցան գուշակել։ որովհետեւ այն բաներն անոնք միայն կրնան գուշակել եւ հասկընալ, որոնք որ կրնան ի դժբաղդէն այնպիսի բաներ ։ Ուրեմն

պէտք է որ Պղատոնէն երեւելի եւ մանաւանդ սրբագոյն անձ մը Օգոստինոսին օգնութեան հասնի, որպէս զի կարենայ սորվել այն հրաշալի խորհուրդները:

Աստուածային նախախնամիչ սուրբ աջը անտեսանելի կերպով Օգոստինոսինը բռնած, զէպ ի ուղիղ ճամբուն մէջ կ'առաջնորդէ զանիկայ: Օգոստինոս Պօղոս առաքելոյն թուղթերը կը բանայ, բայց զողողալով, կարծես թէ կը գուշակէ այն ամէն զոհողութիւններն որ այնպիսի ընթերցմունք մը պիտի պահանջէ իրմէ: Մէկ կողմէն մեծ եռանդ մը կ'ըզգայի նետուելու այն սուրբ կրօնքին զիրկն, որն որ տղայութեանս ատեն այնքան խոր արմատներ արձկած էր սրտիս մէջ. բայց միւս կողմէն չէի համարձակեր. հաւանութիւն չէի կրնար տալ. այսու ամենայնիւ ինքը բռնի զէպ իրեն կը քաշէր զիս. զփնդակ անստուգութեամբ մը մի եւ նոյն վայրկեանը թէ կ'ուզէի, թէ չէի ուզեր. եւ այս անտանելի երկբայութեան եւ նեղութեան մէջ վերջապէս ձեռքս առի Առաքելոյն թուղթերը: »

Աստուած Օգոստինոսին հոն կ'ըստպատէ. «Եկեղեցւոյ ամենամեծ Վարդապետը, կ'ըսէ Ֆլէշիէ, կը վայելէր որ ամենամեծ Առաքելոյն յաղթանակն ըլլար: » Պօղոս առաքեալ մարդ եղեալ Աստուծոյն սքանչելի վարդապետն է, եւ այն տիտղոսն ինքը միայն պիտի կրէր թէ որ Յովնանիէս Աւետարանիչ մը ունեցած չըլլայինք: Միայն թէ հոս զիտողութեան արժանի բան մը կայ. այն առաքեալն որ այս աշխարհքիս մտերիմ ընտանութեանը ժամանակ մեր Փրկչին սրտին վրայ իւր դուսը հանդէսցուցած է, Բանին Աստուծոյ զերագոյն սքանչելեացն երգողը կ'ըլլայ. իսկ ընդհակառակն այն միւս առաքեալն որ նախ Դամասկոսի ճամբուն վրայ, եւ յետոյ եւս մինչեւ երրորդ երկինք յափշտակուելով, Բանին Աստուծոյ փառաւորութեանը հանդիսատես եղած է, անոր խոնարհութեան եւ նուաստութեանը պատմիչ կ'ըլլայ: Պօղոս առաքեալ՝ որ առաքեալ ըլլալէն առաջ հալածող եւ թշնամի էր Քրիստոսի, այնպիսի փառաւոր լոյս մը կ'արձկէ մարդկային ապականութեան, Աստուծոյ մարդեղութեան եւ աշխարհքիս փրկագործութեան վրայ, որ մարդուն աչքը կը չլայնէ. այնպիսի ուժգին հաւատք եւ լեզու մը կը զործածէ որ անպատրաստ եւ անվարժ մտքի մը ցնորում կը պատճառէ: Բայց կրկին եւ կրկին անգամ կարդալով այն թուղթերը, մարդս կամաց կամաց այն պարզ եւ խիստ ոճին վարժելով՝ կ'ըզմայլի, կը հիանայ: Ոչ ոք Պօղոս առաքելոյն չափ

բարձր եղած է. ոչ Դաւիթ, ոչ Նաայի եւ ոչ իսկ Յովհաննէս Աւետարանիչ. ինչպէս որ մարդկային անկման խորութեան ահարկութիւնը լաւագոյն հասկցող մը չկայ, վասն զի սիրտը դեռ Յիսուսի Քրիստոսի ատելութեամբը լի էր երբ Դամասկոսի ճամբուն վրայ գետին զարնուեցաւ, այնպէս ալ չկայ մարդ մ'որ իրմէ աւելի վսեմութեամբ պատմած ըլլայ մարդկային փրկագործութեան հարկաւորութիւնն Աստուծոյ մը մարդեղութեամբը, չարչարանօքը եւ մահուամբը:

Օգոստինոս հազիւ թէ Առաքելոյն թուղթերուն առաջին տողերը կը կարդայ, զարմանքը չկրնար զսպել. Պղատոնի գիրքերը կարդացած ատեն սիրտը ստուգիւ շատ ճմլած էր, հիմա բոլոր անձն այնպիսի շարժումունք մը կ'ըզզայ որ դաղափարն իսկ ունեցած չէ. «Ո՛հ եթէ գիտնայիր, կ'ըսէ. ո՛վ Հռոմանիանոս, թէ ինչպիսի լոյս մը երեւցաւ ինծի յանկարծ. կը բաղձայի ցուցունիլ զայն ոչ միայն քեզի, որ այնքան ստենէ ի վեր կ'ուզես տեսնալ այն անձանօթը, այլ նաեւ քու անգութ թշնամւոյդ, որն որ կը հալածէ զքեզ ատեաններու եւ դատաւորներու առջին՝ հարստութիւնդ ձեռքէդ յափշտակելու համար, եւ տարակոյս չունիմ որ երբ այն լոյսն ինքն ալ տեսնալու ըլլար՝ ինչպէս որ ես կը տեսնամ, նոյն ընդ նոյն կը հրաժարէր աշխարհքէս, կը թողուր իւր պարտէզները, տները, ինչոյքները, մէկ խօսքով այն ամէն բաներն որոնք հիմա իւր սիրտը կը գրտւեն, եւ եռանդազին եւ անուշ սիրոյն թեւերովը կը թռչէր, կը սլանար դէպ ի այն գեղեցկութիւնը»

(Շարայարեյի)

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ

ԱՌՁԵՌՆ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅՆԵՐԷՆ-ԳԱՂՂԻՆԵՐԷՆ

Նոր տպագրութիւն (երկրորդ)

Ուղղեալ եւ յաւելեալ

աւելի քան 50000 բառ, ոճ եւ այլն,

Սոյն օգտակար գործ՝ կը բովանդակէ հայերենի ընթացիկ բոլոր բառերէն զառ՝ զիտական եւ արուեստական բաղմաթիւ բառեր, ոճեր եւ ասացուածներ, իրենց դաղը՝ թարգմանութեամբն: Բառից զանազան առումները բացատրուած են բաղմաթիւ օրինակօք:

Գործոյն վերջն աւելցուած է գաղղ. լեզուի անկանոն եւ պակասաւոր բայից պարզ ժամանակներու ցանկն՝ հանդերձ պիտանի եւ կարեւոր ծանօթութեամբ: Էջ իւր 1000, ընտիր թուղթ, մաքուր տպագրութիւն:

Գին	{	զօրաւոր քառ.դոնէ դահեկան	25
		լաթակաղմ	» 27
		կիսակաշի	» 32

Կեդրոնատեղին է Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, վաճառատուն, թիւ 27, Ֆիննանդլար, Կ. Պօլիս: Կը գտնուի Պ. ՊԱՆՆՅԻ եւ բոլոր հայ գրավաճառաց քով, ինչպէս նաեւ Բերա, Մեծ Վոշոց, ՎԱՅՍԻ եւ ՔԱՅԼԻ գրավաճառանոցները, եւ Ղալաթիա Մահմուտի ճաստոնսի, թիւ 42, ՌՕՄԱՆ եւ ԸՆԿ. թղթա-վաճառանոցն:

ՊԱՏԿԵՐ տասն է հինգ օրը մի անգամ կը հրատարակուի :

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դահեկան :
Դաւառաց եւ օտար երկիրներու համար
թղթատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « :

Իշխարանցիշր թիշ 2 դահեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա , Եւշիլ փողոց
Թիւ 1 , ուր պետք է ղիմել բաժանորդագրութեան եւ թերթին
վերաբերեալ այլ ամենան խնդրոց համար :

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر